

Ինչպե՞ս պատրաստել դասերը երեխայի հետ



Դպրոցահասակ երեխաների ծնողների համար երբեմն դժվար է լինում երեխայի դասապատրաստման գործընթացը: Պատճառներից մեկն այն է, որ ոչ միշտ է հաջողվում երեխային ժամանակին նստեցնել տնային հանձնարարություններն անելու: Մյուս պատճառը ծնողի զբաղվածության աստիճանն է:

Աշխատող ծնողն աշխատանքից հետո տնային գործերով ընկնելով, շատ քիչ ժամանակ է կարողանում հատկացնել երեխայի դասապատրաստման գործընթացին:

Իհարկե, ամենաշատը օգնության կարիք ունեն տարրական դպրոցի աշակերտները, սակայն երբեմն բարձր դասարանների աշակերտները ևս ծնողի օգնության կարիքն են ունենում:

Այս հոդվածը կփորձի փոքրիշատ օգնել ծնողին ճիշտ կազմակերպել երեխայի տնային դասապատրաստման ընթացքը:

Մինչ տնային աշխատանքների կատարում երեխան դպրոցից վերադառնալով պետք է հանգստանա: Ցանկալի է, որ դպրոցից հետո երեխան 0.5-1 ժամ զբոսնի: Մինչ տուն վերադառնալը թողեք երեխան դպրոցի բակում մի քիչ վազվզի իր ընկերների հետ:

Վերադառնալով տուն, ճաշելով ու փոքր-ինչ հանգստանալով, կարելի է սկսել տնային հանձնարարությունների կատարումը:

Շատ քիչ երեխաներ կան, որոնք առանց ծնողի հորդորանքի ինքնուրույն կսկսեն դասապատրաստումը:

Աշակերտներին կարելի է բաժանել 2 խմբի: Մի խմբի երեխաներին ստիպելով են նստեցնում տնային հանձնարարությունները կատարելու, իսկ մյուս խմբի երեխաները գերադասում են ամեն ինչ արագ-արագ վերջացնել և վայելել իրենց ազատ ժամանակը:

Երկրորդ խմբի երեխաներն, իհարկե, ավելի ցանկալի են: Սակայն արագ-արագ դասապատրաստման արդյունքում կարող են նյութը լավ չյուրացնել: Այդ իսկ պատճառով երկու դեպքում էլ ծնողի օգնության

կարիքն է լինում:

Եթե երեխան չի ցանկանում նստել տնային հանձնարարությունները կատարելու, ապա պետք է որոշակի կանոններ ստեղծեք, որոնց երեխան պետք է խստորեն հետևի: Լավ է, եթե երեխան հետևում է օրվա որոշակի ռեժիմի: Սակայն ոչ միշտ է հաջողվում դրան հասնել: Դրա համար երեխայի հետ պետք է հանգիստ, բայց կտրուկ խոսել: Օրինակ, թույլ տվեք երեխային խաղալ կամ հեռուստացույց նայել որոշակի ժամանակ, ապա ժամ



ավարտվելուց անմիջապես հետո անցեք դասապատրաստմանը: Ընդ որում, եթե երեխան դիտում է իր սիրելի հաղորդումը, պետք չէ անջատել հեռուստացույցը մինչև հաղորդման ավարտը: Բայց հիշեք, որ դասապատրաստման և հետագա խաղերի համար նրան քիչ ժամանակ է մնում: Տարրական դասարանի աշակերտների հետ, սովորաբար, ավելի հեշտ է լինում: Սակայն պետք է հետևել, որպեսզի երեխան սխալներ չանի: Լավ է, որ առաջին հերթին սևագրության վրա արվի դասը, ապա ուղղումներից հետո մաքրագրվի: Եթե սխալը կատարվել է տետրակի մեջ, սովորեցրեք երեխային ուղղումները կոկիկ կատարել: Եթե սխալները քիչ են, պետք չէ երեխային ստիպել, որպեսզի նա արտագրի ողջ աշխատանքը:

Ըստ հոգեբանների, դասապատրաստման համար ամենահարմար ժամանակը 15-ից 18-ն ընկած ժամանակահատվածն է: Յուրաքանչյուր 30-40 րոպեն մեկ անհրաժեշտ է 5-10 րոպեանոց ընդմիջում հատկապես տարրական դասարանի աշակերտների դեպքում: Այդ հանգիստն անհրաժեշտ է հոգևած աչքերը, ձեռքերն ու մեջքը հանգստացնելու համար: Երեխայի համար օգտակար կլինի այդ ընթացքում մի քանի մարմնամարզությունն անել ու մի փոքրիկ միրգ ուտել:

Ցանկալի է, դասապատրաստման ամբողջ ժամանակահատվածը տեղավորել 1.5-2 ժամվա մեջ: Դասապատրաստումն անհրաժեշտ է սկսել ամենադժվար առարկաներից, օրինակ մաթեմատիկա կամ մայրենի լեզու, իսկ բանավոր առարկաները թողել վերջում:

Ճնողների հիմնական նպատակը երեխային ինքնուրույնության սովորեցնելն է: Եթե երեխան չսովորի ինքնուրույն կատարել դասերը,

ապա վաղ թե ուշ նա կդադարի դասերով զբաղվել, կամ ծնողը ստիպված դասապատրաստման ընթացքում երեխայի կողքից երբեք չպետք է հեռու գնա:

Սկզբնական շրջանում, մանավանդ ցածր դասարանների աշակերտներին, պետք է օգնել դասապատրաստման գործում: Օգնեք երեխային սովորել օգտվել աղյուսակներից, սխեմաներից: Մաթեմատիկայի առաջադրանքները թղթի վրա նկարելով բավական կհեշտացնեք երեխայի համար ամենադժվարը թվացող դասը: Երեխային նվիրեք առարկային վերաբերող գույնագույն գրքեր ու հանրագիտարաններ:

Առաջին իսկ օրվանից երեխային թույլ տվեք ինքնուրույն մտածել: Մի շտապեք օգնել նրան խնդիրը լուծելուց կամ մի հուշեք: Ցանկալի է, որ դուք զբաղվեք ձեր գործերով, ոչ թե ամբողջ ժամանակ գտնվեք երեխայի կողքին: Իսկ երեխան թող ձեզ կանչի անհրաժեշտության դեպքում:

Եթե դասապատրաստման ընթացքում երեխայի մոտ դժվարություններ ի հայտ չեն գալիս, ապա վերջում պարզապես ստուգեք կատարված տևային հանձնարարությունները և անհրաժեշտության դեպքում երեխային բացատրեք կատարված սխալը:



Համեմատաբար մեծ տարիքի երեխաները (3-րդ դասարան և բարձր), դասերը պետք է ինքնուրույն անեն և հարց առաջանալու դեպքում արդեն իրենք պետք է մոտենան ձեզ, այլ ոչ թե կանչեն իրենց մոտ: Ցավոք սրտի, շատ քիչ երեխաներ կան, որոնք դասերը պատրաստում են

ուշադիր ու լավ: Եթե ձեր երեխան այդպիսինն է, ապա կարելի է հսկողությունը թուլացնել: Մնացած դեպքերում անհրաժեշտ է վերջում ստուգել ոչ միայն գրավոր աշխատանքներն այլև բանավոր դասերը:

Ոչ ոքի համար էլ գաղտնիք չէ, որ բարձր դասարանի աշակերտները երբեմն տևային հանձնարարությունները չեն կատարում, կամ էլ պատրաստում են միայն այն առարկաները, որոնցից հետագայում քննություն պետք է հանձնեն: Ի՞նչ անել նման դեպքում: Եթե դեռահասն ընդհանուր առմամբ լավ է սովորում, ապա պետք չէ անիմաստ տարածայնություններ առաջացնել: Կստահեք նրան և թույլ տվեք

ինքնուրույն որոշել ինչ անել: Ծնողի հսկողությունը պետք է այն ժամանակ, երբ դժախտի օրագիրը միայն ցածր թվանշաններով է լցված: Փորձեք պարզել պատճառը. նա չի՞ հասկանում դասը, թե պարզապես չի ուզում սովորել: Միգուցե նրան անհրաժեշտ են տվյալ առարկայի հավելյալ պարապմունքներ:

Իսկ ընդհանրապես հիշեք, որ օրագրի թվանշանները միշտ չէ, որ պատմում են, թե դպրոցն ավարտելուց հետո ինչպիսի ընթացք կունենա երեխայի կյանքը: Քիչ չեն դեպքերը, երբ դպրոցը գերազանց ավարտած աշակերտները մի կերպ ծայրը ծայրին են հասցնում, իսկ թույլ աշակերտները կյանքում հաջողակ մարդիկ են դառնում:

Կարևորը, պետք է մեծացնել բարի ու ազնիվ մարդ, պահպանել նրա առողջությունն ու ձեր ջերմ փոխհարաբերությունները: